

ՏԵՂԵԿԱՏՈՒԻ

DIEGHIEGAIDOLU

ديجيجادو

Հրատարակումն Գահիրեի ՀԲԸՄ-ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 7-ՐԴ ԽԱՂԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ	1
ԱՄՆԻ ԱՅՈՆ	2
ԵՐԳԻԾԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ	3
ԽԱՉԸ ԻԲՐԵԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ ԵՒ ԽԱՉՔԱՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԾԱԳՈՒՄԸ	4
Ի՞ՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ ՀԱՅ ԸԼԼԱԼ	5
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՑ	6
ԳԱՆԱՏԱՑԻ ՀԻԻԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ	7
ՍԱՐՈՒԽԱՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ	8
ՅՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐ	9
ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵՆԸՆ ԱՌԱՋ	10
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 7-ՐԴ ԽԱՂԵՐԸ	10
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՈՎ	11
ՄԵՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ՝ ԱՐԹՕ ՉԱՔՄԱՔՃԵԱՆ	12
ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԿԱՊԸ՝ ՄԻԱՆՄԱՐԻ ՀԱՅԵՐԸ	14
ԹԷ ԻՆՉՈՒ ԶԻՆԱՑԻՆԵՐԸ ՀԱՅԵՐԸՆ ԿԸ ՍՈՐՎԻՆ	15
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ	16
ԳԱՀԻՐԵԻ ՀԱՆՐԱԿԱՌՔԵՐԸ ԵՒ ԵՍ	17
Հ.Մ.Ը.Մ. ԿԱՄՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ	18
ԳԱՀԻՐԵԻ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՄՐՑԱՇԱՐՔԸ	21
Հ.Մ.Ը.Մ. ԱՐԱՐԱՏԻ 2019-Ի ՄՐՑԱՇԱՐՔԸ	23
ԱՆԴԱՄԱԿԱՆ	

ԽՄԲԱԳՐ
Մարուշ Երամեան

**ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՈՒ**
Տոքթ. Վիգեն Ճիգմեճեան

**ՍՐԲԱԳՐԻՉ
ՎԵՐՍՏՈՒԳԻՉ**
Անայիս Ճիգմեճեան

**ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ
ՁԵԼԱԽՈՐՈՒՄ**
Շահե Լուսարարեան

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Nubar Digital

**Գահիրեի ՀԲԸՄ-ի
լուրերուն հետեւեցէք
www.agbuegypt.com
կայքէջով:**

**Ծանօթացէք «Հայաստան
եւ Հայերը Արաբական
Սամուլին մէջ. 1876-1923»
հաւաքածոյի նկարներուն
www.arminmedia.com
կայքէջով:**

**«Տեղեկատու»ի յօդուածա-
գիրներուն արտայայտած
կարծիքները անպայման-
օրէն չեն ներկայացներ
Գահիրեի ՀԲԸՄի պաշտո-
նական տեսակետները:**

**Թիւ 93 Նոր Զրջան
ՇՈՎՏԵՄԲԵՐ 2019**



ՀԱՅՈՒՆ ՀԱՒԱՔԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ

Աշխարհի տարբեր երկիրներում մեջ հայ արուեստագետներ ապրած են եւ կը շարունակեն ապրիլ եւ ստեղծագործել. անոնց անունը դուրս կու գայ իրենց ապրած երկրին սահմաններէն, հասնելու համար տարբեր երկիրներ ու ցամաքամասեր: Անոնք ոչ միայն չեն ժխտեր իրենց ազգութիւնը, այլ հպարտօրէն կը նշեն իրենց արմատները եւ կը սատարեն ՀԱՅ մարդու կերպարին բիրեղացման, օտարներուն համար: «Հայը» անծանօթ, լաւագոյն պարագային՝ մշուշոտ կերպար մը չէ ա՛լ, այլ յստակօրէն ուրուագծուող պատկեր մը ստեղծագործ, հնարամիտ, ազնիւ եւ աշխատասէր անհատի:

Աշխարհն ամբողջ այսօր գիտէ, որ Շարլ Ազնաւուր, Արշիլ Կորքի, Ռիլերմ Սարոյեան, Քիմ Քարտաշեան ու շատ ուրիշներ հայ են, կամ ծագումով հայ են: Այս գիտնալը ինչպէ՞ս կ'օգնէ մեզի, ի՞նչ կու տայ: Խորքին մէջ՝ պէ՛տք է բան մը տայ:

Թերեւս փոքր ազգի մը զաւակը ըլլալու բարդոյթն է ասիկա, որովհետեւ նման հարցադրում նոյնիսկ ձեւաբանել պիտի չմտածէին ֆրանսացին, անգլիացին, գերմանացին կամ ճափոնցին:

Իսկ «փոքր» ըլլալը բնաւ կապ չունի ազգի մը զաւակներուն թիւին հետ, որովհետեւ արաբներն ալ, հակառակ իրենց մեծ թիւին, ունին նոյն բարդոյթը. օրինակ երբ արաբ մը մեծ հպարտութեամբ դիմատետրի իր էջին վրայ կը դնէ Անգլիոյ թագուհին նկարը, որ կը շնորհաւորէ եգիպտացի արաբ դասախօսը, Անգլիոյ համալսարաններէն մէկուն տնօրէն նշանակուած ըլլալուն առիթով, չենք կրնար չմտածել նոյն՝ «փոքր» ազգի զաւակ ըլլալու բարդոյթին մասին:

Անհատները, բացի արդար հպարտութենէն շատ բան չեն աւելցներ ազգին: Սակայն հաւաքական կերպարը այլ հարց է:

Սփիւռքահայու մեր հաւաքական կերպարին համար դժբախտաբար չենք կրնար ըսել այն, ինչ կ'ըսենք մեր աշխար-

հահռչակ արուեստագետներուն մասին: Սփիւռքահայուն համար ըսի, որովհետեւ հայաստանաբնակ հայերը ունին իրենց հաւաքական կերպարը, որուն մէջ յստակօրէն կը զգացուի երկրին դրոշմը:

Սակայն կարելի՞ է խօսիլ «հաւաքական» կերպարի մասին Սփիւռքի մէջ, որ ընդհանուր պատկեր մը չի պարզեր, այլ խճանկար մըն է, բազմաթիւ եւ տարբեր «հաւաքական ինքնութիւններէ» կազմուած:

Կ'անդրադառնանք որ հարցը շատ բարդ է. հայրենիք չկայ, որ իր դրոշմը դնէ անհատին վրայ. ընդհակառակը՝ իւրաքանչիւր օտար երկիր իր դրոշմը կը դնէ սփիւռքահայուն վրայ, բան մը, որ թէեւ խճանկարը հետաքրքրական եւ բազմագոյն կը դարձնէ, միաժամանակ սակայն կը հեռացնէ կարծես համայնքները իրարմէ, նախ տեղական լեզուի ազդեցութեան, ապա ապրած երկիրներէն ստացուած դրոշմին պատճառով:

Վերը կը հարցադրէինք, թէ աշխարհահռչակ արուեստագետներու հայ ըլլալուն աշխարհի գիտակցութիւնը ի՞նչ կու տայ մեզի, կամ՝ պէ՛տք է բան մը տայ: Այս հարցադրումը անհատներու պարագային եթէ ժխտական պատասխան ունի, ապա հաւաքական կերպարի պարագային կարելոր, նոյնիսկ էական կը դառնայ անոր դրական պատասխանը, որովհետեւ այո՛, հաւաքական յստակ կերպար մը շատ բան կրնայ տալ սփիւռքահայերուս:

Նախ իրարու նման ըլլալով, կարելի կ'ըլլայ զգալ, որ մեծ խմբաւորում մըն ենք (Սփիւռքի տարածքին տասը միլիոնը քիչ թիւ չէ), հետեւաբար որոշ ոյժ մը կը ներկայացնենք գոնէ մեր կեցածքներով, մինչ այսպէս՝ իրարմէ անջատ եւ «տարբեր», օտարին դէմ միշտ «անկարող» ըլլալու լուռ համոզում մը ունինք:

Երկրորդ՝ մեր հաղորդակցութիւնը – որ բոլորս ալ գիտենք թէ չէ այնպէս, ինչպէս պարտ էր ըլլալ տարբեր գաղութներու միջեւ – կրնայ աւելի ջերմ, հետեւաբար՝ աւելի արդիւնաւետ ըլլալ:




Երրորդ՝ կը հեշտանայ հայուն ինքնութեան գիտակցութիւնը, որ այսօր տարօրինակ շփոթ մը կը պատճառէ երիտասարդ սփիւռքահայերուն, մանաւանդ երբ ա՛լ չեն տիրապետեր արեւմտահայերէնին:

Հետեւաբար որքան լեզուն կարելոր է մեզի, սփիւռքահայերուս համար, նոյն-

քան կարելոր է մեր հաւաքական կերպարին գիտակցութիւնն ու զայն կերտելու ճիգը: Այս ճիգն է, որ պէտք է դառնայ մեր ուշադրութեան առարկան, լեզուին՝ արեւմտահայերէնին տրուած ուշադրութեան կողքին, հաւասարապէս:

ԱՄՆԻ ԱՅՈՆ



Հոկտեմբեր 29-ի իր նիստին, ԱՄՆի կառավարութեան Ներկայացուցիչներու Տունը ջախջախիչ մեծամասնութեամբ՝ 405 /11 ընդունեց հայոց ցեղասպանութեան բանաձեւը, ուրախութեան մեծ ալիք մը փոխանցելով ոչ միայն աշխարհասփիւռ հայութեան, այլ ամբողջ աշխարհի մէջ:

Ճիշդ է, որ այս որոշումը կու գար որպէս հակազդեցութիւնը Թուրքիոյ սուրիական հողերու ներխուժումին եւ թրքական ախորժակները սանձելու ձեւ մըն էր, ճիշդ է նաեւ, որ մինչեւ վերջնական յաղթանակ, բանաձեւը պէտք է անցնի Գոնկրեսէն, ապա նախագահէն:

Տակաւին շատ երկար ճամբայ ունինք կտրելիք, սակայն ինչպէս կ'ըսէ Ժողովրդական խօսքը՝ «ամէն ճամբայ մէկ

քայլով կը սկսի». ասիկա մնացեալ քայլերու կողքին, որոնք առնուած են ու կը շարունակուին առնուիլ, մեծ քայլ մըն է:

Շնորհակալութեան խօսք չունինք որեւէ երկրի, կամ որեւէ պետութեան, որովհետեւ ճշմարտութիւնը շնորհ չէ, որ կը տրուի, այլ՝ ճառագայթող իրականութիւն, զոր պարտաւոր են (էին) յայտարարել: Բոլորս ալ գիտենք, որ Ցեղասպանութեան ճանաչումը, մանաւանդ անոր հատուցումը միշտ ալ կաղացած են քաղաքական որոշ հաշիւներու պատճառով եւ ոչ՝ Ցեղասպանութեան եղած ըլլալը կասկածի տակ առնուելուն համար:

Սակայն այսօր, այս քայլին առջեւ ուրախ ենք այնպիսի ուրախութեամբ մը, որ խթան կը հանդիսանայ շարունակելու սկսուած դժուար ուղին:

«ԵՐԳԻԾԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ»

«Ազգերը ընդհանրապես կ'որակա-
տրուին հաւաքական յիշողութեան պա-
շարներու իրենց հարստութեամբ»:

Այս բառերով իր խօսքը սկսաւ Եգիպ-
տոսի Ազգային Արխիւատան տնօրէն
դոկտ. Հիշամ Ազմի այն հանդիսութեան
ընթացքին, որ տեղի ունեցաւ Կիրակի, 28
Յուլիս 2019-ին, Ազգային Արխիւատան
սրահէն ներս եւ որ կը նշէր սկիզբը «Եր-
գիծանկարչութեան Յիշողութիւնը»
ծրագրին, միաժամանակ շնորհանդէսը
կը կատարէր Սարուխանի վերջերս հրա-
տարակուած երկլեզու գիրքին՝ «Անյայտ
Սկիզբներ»ուն (այս հատորին մասին
տե՛ս «Տեղեկատու» թիւ 92, էջ 14):

Հանդիսութեան բացումը կատարեց
Ապտալլա Ալ Սաուի, որ թէ՛ այս ծրագրին
եւ թէ՛ Սարուխանի վերջին հրատարակու-
թեան ետին կեցող անձն է, համակ եռանդ
եւ աշխատանք:

Տնօրէնէն ետք խօսքը տրուեցաւ ՀԲԸ-
Մի Գահիրէի մասնաճիւղին ատենապետ
տորթ. Վիզէն Ճիզմէճեանի, որ շեշտը
դրաւ ոչ միայն հայերուն Եգիպտոս գալու
պարագաներուն վրայ, այլ նաեւ այն դե-
րին, որ հայերը խաղացած են, ըլլալով
աշխատասէր եւ երկրին ծառայող քաղա-
քացիներ, «Որոնցմէ մէկը, որ այսօր

կրնայ մեր ներկայացուցիչը ըլլալ, Սա-
րուխանն է»:

Խօսք առաւ նաեւ Երգիծանկարչու-
թեան թանգարանին տնօրէնը՝ Կումաա
Ֆարիաթ:

Ապա Ապտալլա Ալ Սաուի պաստառին
վրայ ցուցադրեց լուսանկարներ, որոնք
պատմականը կ'ընէին երգիծանկարչու-
թեան սկիզբին, հակիրճ բայց շատ խիտ
դասախօսութեամբ մը:

«Մինչեւ վերջերս,- ըսաւ Ապտալլա Ալ
Սաուի,- կար այն կարծիքը, թէ Սարու-
խանն է առաջինը, որ Եգիպտոսի մէջ
ծաղրանկարչական գիրք հրատարակած
է: Մեր պրպտումները սակայն հաստա-
տեցին, որ Սէրէսն է առաջին գիրքին հե-
ղինակը, սպանացի մը, որ 1908 թուակա-
նին Գահիրէ հաստատուած եւ կեանքին
մինչեւ վերջին օրը հոս ապրած է»:

Յիշատակի վաճանակներով
պատուուեցան այն անձերը, որոնք օժան-
դակած են այս ծրագրին յաջողութեան եւ
որոնցմէ երեքը Եգիպտահայեր են՝ Տիկ.
Սիլվա Ներետեան-Բլատեան, ՀԲԸՄիու-
թիւնը եւ արուեստագէտ տիար Հրանդ
Քէշիշեան:





ԽԱՉԸ ԻԲՐԵՒԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ ԵՒ ԽԱՉՔԱՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Շաբաթ, 14 Սեպտեմբեր 2019-ի երեկոյեան, ՊԸԸՔ-տանեան հանդիսասարահին մէջ Գահիրէի Ազգային Առաջնորդարանի կողմէ բանախօսական երեկոյ մը կազմակերպուած էր՝ «Խաչը իբրեւ խորհրդանիշ եւ խաչքարի պատմական ծագումը» նուիրուած Խաչվերացի տօնին:

Բանախօսութեանը ներկայ էին Եգիպտոսի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Աշոտ Եպիսկոպոս Մնացականեան, Արժանապատիւ Տ. Յակոբ Քահանայ Յակոբեան, Գահիրէի Քաղաքական ժողովի ատենապետը, Թեմական եւ Քաղաքական ժողովներու անդամներ եւ Ե.Գ.Մ. Հոգաբարձութեան ատենապետն ու անդամներ եւ համայնքայիններ:

Օրուան բանախօսը՝ հոգեշնորհ Տ. Դերենիկ Աբեղայ Սահակեան, նիւթը բաժնաժ էր երեք մասերու. ա) Նախաքրիստոնէական խաչեր, բ) Խաչը իբրեւ քրիստոնէական խորհրդանիշ եւ գ) Խաչքարի պատմական ծագումը:

Բանախօսութեան ա) եւ բ) մասերու ենթաբաժիններու մէջ նախ եւ առաջ Հոգեշնորհ Հայր Սուրբը անդրադարձաւ խորհրդանշանին՝ նշելով որ ան ծագած է յունարէն «Σύμβολο» (սիմպոլ) բառէն եւ կը նշանակէ իրական նշան: Այնուհետեւ խօսեցաւ նախաքրիստոնէական խաչի նշաններու եւ անոնց նշանակութեան մասին: Ըստ ենթաբաժիններու ան անդրադարձաւ քրիստոնէական առաջին խորհրդանշաններուն, որոնք յայտնաբերուած են Գաթագոմպաներու մէջ (հին գերեզմանատուններ) եւ որոնց մէջ առաջին երեք դարերուն հալածուող քրիս-



տոնեաները գաղտնի կերպով ապրած եւ ստեղծած են տասնեակ խորհրդանշաններ:

Շարունակելով Խորհրդանշաններու նիւթը՝ խօսեցաւ նաեւ մէկ գիրով (monogram) խորհրդանշաններու մասին, որոնք ընդունուած են խաչի նախաձեւերը համարել:

Բանախօսը անդրադարձաւ նաեւ խաչի յայտնի ձեւերուն, ներկայացնելով աւանդական եկեեցիներու եւ քրիստոնէական տարբեր համայնքներու կողմէ ճանչցուած խաչերու խորհուրդը:

Ան մասնաւորապէս անդրադարձաւ հայկական խաչի եւ հայկական յաւերժութեան նշանի պատմութեանը եւ խորհուրդին, ինչպէս նաեւ հայ իրականութեան մէջ խաչքարերու պատմական ծնունդին: Ան նախ խօսեցաւ նախաքրիստոնէական «Վիշապաքարերու» մասին, որոնք ընդունուած էին կանգնեցնել ջուրերու, աղբիւրներու մօտ եւ որոնց մէկ մասը քրիստոնէութեան շրջանին ձեւափոխուելով՝ խաչքարեր դարձած են:

Շարունակելով նիւթը՝ հայր Սուրբը ներկայացուց խաչքարերու զարգացման պատմական փուլերը եւ անոնց տարբերութիւնները, ինչպէս նաեւ խաչքարերու կանգնեցման պատճառները: Ան յատկապէս անդրադարձաւ Ամենափրկիչ, ամենահին եւ ամենամեծ խաչքարերու պատմութեանը:

Վերջաւորութեան Հայր Սուրբը ըսաւ. «Հայերս անսահման սէր ունինք հանդէպ Քրիստոսի եւ Իր Խաչը, որ արտայայտուած է բազմազարանոց խաչքարերու կանգնեցմամբ, որոնց վրայ խաչ-



քարագործ վարպետներ իրենց միտքի եւ հոգւոյ թռիչքը պատկերած են անկրկնելի գեղեցկութեամբ՝ դարձնելով հայ ժողովուրդի հաւատքի ամրակուռ պահապաններ»:

Նշենք որ ամբողջ բանախօսութիւնը կ'ընթանար մեծ պաստառի մը վրայ տե-

սասալիկներու ցուցադրութեամբ, որ ներկաներուն աւելի մատչելի դարձուց դասախօսութեան նիւթը:

**Դիւան Եգիպտոսի Հայոց Թեմի
Գահիրէի Ազգային Առաջնորդարանի**

ԻՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ ՀԱՅ ԸԼԼԱԼ

Ա. Երկրի մը մէջ ծնիլ, ուրիշ երկիր մը ապրիլ, տարբեր երկրի մը մէջ մեռնիլ եւ չորրորդ տեղ մը թաղուիլ:

Բ. Բազմաթիւ լեզուներ խօսիլ, սակայն որեւէ մէկը կատարեալ չգիտնալ, մանաւանդ՝ հայերէնը:

Գ. Անաստուած ըլլալու իսկ պարագային եկեղեցի յաճախել եւ կրօնական արարողութեանց հետեւիլ, բան մը չհասկնալով:

Դ. Եկեղեցիի մը թաղական ըլլալ, առանց անոր օրէնքները ճանչնալու:

Ե. Խոնարհ ըլլալ օտարներուն հանդէպ եւ գոռոզ՝ իր ազգակիցներուն:

Զ. Ապրիլ օտար երկրի մը մէջ հայրենիքի կարօտով եւ հայրենիքի մէջ՝ օտար երկիրներ երազելով:

Է. Ողբալ հայերէն լեզուի նահանջը, բայց տան մէջ օտար լեզուով խօսիլ:

Ը. Ընկերային դիրքը բարձրանալուն զուգահեռ հայութիւնը մոռնալ եւ զայն յիշել միայն, երբ ծերութեան դուռը հասնի:

Թ. Ունենալ արեւմտահայերէն եւ արեւելահայերէն, երկու ուղղագրութեամբ:

Ժ. Օտար լեզուով խօսիլ, հայերէն աղօթել եւ թրքերէն հայիոյել:



ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

Հայաստանի Հանրապետութեան անկախութեան տօնին եւ Կոմիտասի ծննդեան 150 ամեակին առիթով ՀՀ եգիպտոսի դեսպանութիւնը կազմակերպած էր երաժշտական երեկոյ մը Շաբաթ, 21 Սեպտեմբեր 2019-ի երեկոյեան, Գահիրէի Օփերային փոքր դահլիճէն ներս:

Այս առիթին համար Երեւանէն յատկապէս հրաւիրուած էին երկու երաժիշտ-կատարողներ՝ ալթահար Վաչէ Հովէեան եւ դաշնակահարուհի Աննա Ճուղուրեան, որոնք դասական երաժշտութեան նշանաւոր գործերու՝ Կլինքայի, Շումանի, Փիածոլայի կողքին հանրութեան հրամցուցին Կոմիտասի Ծիրանի ծառ, Չինար եւ եւ Կռունկ շատ սիրուած երգերը:

Յայտագրի կէսին եգիպտահայ երկու պարախումբերու՝ Զանգեզուրի եւ Սարտարպատի հեզաճկուն աղջիկներն ու եռանդուն տղաքը ներկայացուցին Եղեգ, Մախմուր աղջիկ, Կռունկ եւ Բերդ պարերը, մեծ խանդավառութեամբ համակելով ներկաները:

Այստեղ կ'արժէ անդրադառնալ երկու երաժիշտներուն, որոնք միջազգային մրցումներու դափներկիրներ են:

Վաչէ Հովէեան Երեւան ծնած եւ Երեւանի Կոմիտասի անուան երաժշտանոցէն վկայուած է, որմէ ետք իր ուսումը շարունակած է Նիւ Եորքի Mannes college of music-ի մէջ:

1998 թուականէն Հովէեան նշանաւոր նուագախումբերու հետ ելոյթ կ'ունենայ որպէս մենակատար, ինչպէս Հայաստա-



նի ֆիլարմոնիք նուագախումբին, Կովկասի Սենեկային նուագախումբին, Նիւ Ճըրզիի Լիրիք նուագախումբին, Վիթթմայրլի սենեկային եւ այլ նուագախումբերու հետ:

Մաս կազմած է նաեւ սենեկային եռեակներու եւ քառեակներու, նուագելով ինչպէս Անի Գաֆաւեանի (ԱՄՆ), Զէնիա Պաշմէթի, Ուէյ Եի Եանկի (Չինաստան), Սերկէյ Խաչատրեանի (Գերմանիա) եւ այլ երաժիշտներու հետ:

2013-էն ի վեր ՀՀ Մշակոյթի նախարարութեան խորհրդական է, ինչպէս եւ դասախօս՝

Կոմիտասի անուան երաժշտանոցէն ներս:

Դաշնակահարուհի Աննա Ճուղուրեան Երեւան ծնած է եւ վկայուած Կոմիտասի անուան երաժշտանոցէն, որպէս դաշնակահարուհի, իսկ երկու տարի ետք տիրացած է տիփլոմի:

2017-2018 թուականներուն վարած է Սենեկային երաժշտութեան Ազգային Կեդրոնի տեղակալի պաշտօնը:

Բազմաթիւ ելոյթներով հանդէս եկած է ինչպէս Հայաստանի, այնպէս ալ Ռուսիոյ եւ Եւրոպայի տարբեր քաղաքներուն մէջ:

2011-ին գնահատանքի գիր մը ստացած է նշանաւոր խմբավար Վլատիմիր Սափվաքովէն:

Այս երկու երաժիշտներուն համերգը կը հարստացնէ եգիպտահայ մշակութային եղանակը, իսկ զոյգ առիթներուն նուիրուած երեկոն հպարտութեամբ կը լեցնէ մեզ:



Հայաստանի Հանրապետության Անկախության տոնին առիթով, ՀՀ ԵԳԻպտոսի դեսպանատունը ընդունելություն մը տուած էր 24 Սեպտեմբեր 2019-ի երեկոյեան, դեսպանատան գեղեցիկ եւ լուսաւոր պարտէզներուն մէջ, որուն հրաւիրուած էին բազմաթիւ դեսպանութիւններու ներկայացուցիչներ, պատասխանատուներ, համայնքին միութիւններու ատենապետերն ու ներկայացուցիչները

եւ ժողովուրդը:

Պէտք է նշել, որ այս տարի, ի տարբերութիւն այլ տարիներու, այս հիւրասիրութեան հրաւիրուած էին նաեւ Գահիրէի Համալսարանի Արեւելեան Լեզուներու կաճառին Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոնին հայերէն լեզուի նոր ուսանողները, որոնց մեծամասնութիւնը դասախօսներ կամ օգնական դասախօսներ են նոյն համալսարանէն ներս:

ԳԱՆԱՏԱՑԻ ՀԻՒԱՆԴԱՊԱՀՈՒՀԻՆ

14 Սեպտեմբեր 2019-ին Գանատայի Նովա Սգորթա նահանգին Եարմութ քաղաքի թանգարանին առջեւ, ներկայութեամբ Նովա Սգորթայի քաղաքապետ Արթըր Ճ. Լըպլանի եւ Գանատայի ՀՀ դեսպանուհի Անահիտ Յարութիւնեանի, բացուեց կատարուած է գանատացի հիւանդապահուհի Սառա Գորնինկի արձանին, որուն հեղինակն է գանատաբնակ քանդակագործ Կարէն Պետրոսեան:



Արդար գնահատանք մըն է ասիկա հիւանդապահուհիին, որ Զարդի եւ Եղեռնի օրերուն, որպէս Near East Relief-ի կամաւոր կը ղրկուի Թուրքիա:

Սառա Գորնինկ համաշխարհային Ա. պատերազմին մաս կազմած է ամերիկեան կարմիր խաչին, ապա՝ Near East Relief-ի:

1919-ին Արարատի փէշերուն ծուարած փոքր գիւղ մը կը հասնի, որպէս որբանոցի պատասխանատու: 1922-ին կը ճամբորդէ Կ.Պոլիս, ապա կը ղրկուի Երեւան, որբանոցի տնօրէնուհիի պաշտօնով: Նոյն

տարուան վերջին ամիսներուն կը ղրկուի Զմիռնիա, որ արդէն ինկած էր թրքական տիրապետութեան տակ: Ս. Գորնինկ կը հաւաքէ որբերը եւ կը հասցնէ ամերիկեան նաւ մը, որ զիրենք Կ. Պոլիս կը տանի:

Աւելի ուշ Սառա Գորնինկ Յունաստանի Սիրոս կղզիին վրայ որբանոց մը կը հիմնէ:

1923 Թուականին Յունաստանի Ճորճ Բ. թագաւորը զինք կը պատուէ Order of the Knights of St. Xavier շքանշանով:

Սառա Գորնինկ կը մահանայ իր ծննդավայրին՝ Եարմութի մէջ 1969 թուականին:

2004 թուականին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. օրհնութեան գիր մը կը յղէ Գորնինկի անուան:

Թորոնթոյի Ցեղասպանութեան Դաստիարակութեան Կեդրոնը կը կոչուի Սառա Գորնինկի անունով, որպէս գնահատանք անոր կատարած մարդասիրական աշխատանքներուն, 20րդ դարու առաջին ցեղասպանութեան ընթացքին:



ՍԱՐՈՒԽԱՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

2019-ը իրօք որ «Սարուխանի տա-րի» է:

Մեծ վարպետին ծննդեան 120-ամեակը իւրայա-տուկ եւ այլազան ձեւերով նշուեցաւ Եգիպտոսի մէջ, սկսեալ Գահիրէի ՀՐԸՄի կողմէ հրա-տարակուած իր իսկ գրիչով յուշերէն, որոնք 1975-ին թեր-թօնի ձեւով լոյս տեսած էին «Արեւ» օրա-թերթին մէջ, «Ինչպէս՝ Եգիպտոս եկայ եւ Ինչպէս՝ Երգիծանկարիչ եղայ» խո-րագրով:

Ապա Մարտ 2019-ին Եգիպտական Եր-գիծանկարիչներու Ընկերակցութիւնը կազմակերպած էր համաշխարհային մրցոյթ մը Saroukhan Returns խորագրին տակ, ուր 180 երկիրներէ 250 երգի-ծանկարիչներու ակնոցներով ներկա-յացուած էր Սարուխան:

Գահիրէի ՀՐԸՄը, միշտ զօրավիգ կանգնելով մշակութային արժանաւոր աշխատանքներու, հրատարակեց “Saroukhan the Unknown Beginnings” մե-ծածաւալ արաբերէն եւ անգլերէն լեզու-ներով գիրքը, խմբագրութեամբ արուես-տագէտ Ապտալլա Ալ Սաուիիի թարգ-մանութեամբ դոկտ. Սուատ Ֆաթիմի:

Յոբելեանական տարին չաւարտած, 8 Հոկտեմբեր 2019-ին Աղեքսանդրիոյ Գրադարանը, համագործակցութեամբ Եգիպտական Երգիծանկարիչներու Ըն-կերակցութեան եւ հովանաւորութեամբ Գահիրէի ՀՐԸՄին, կազմակերպեց տօ-նակատարութիւն մը, նուիրուած Սարու-խանի ծննդեան 120-ամեակին: Ասուլիսին բացումը կատարեց դոկտ. Սամէհ Ֆաու-զի, Director of Media and Communication Sector, որպէս ներկայացուցիչ դոկտ. Մօսթաֆա Էլ Ֆիքիի՝ տնօրէն Աղեք-



սանդրիոյ Գրադա-րանին:

Ապա խօսք առաւ երիցագոյն երգի-ծանկարիչ եւ տնօ-րէն Եգիպտական Երգիծանկարիչնե-րու Ընկերակցու-թեան տիար Կոմաա Ֆարահատ, որ մեծ ակնածանքով ար-տայայտուեցաւ Եգիպտական քա-ղաքական երգի-

ծանկարչութիւնը հիմնելու Սարուխանի դերին մասին: «Սարուխանէն առաջ կար Սանթեզ անուն սպանացի գծագրիչ մը, որ չէր կարողացած լիովին թափանցել Եգիպտացիին ներաշխարհէն ներս», ըսաւ ան. «Իրօք Սարուխան ռահվիրան է Եգիպտական երգիծանկարչութեան, որմէ ազդուած են շատ ծանօթ Եգիպտացի եր-գիծանկարիչներ: Անոր աշխատանքնե-րուն մէջ արագութիւն եւ շարժում կայ, կարծէք կերպարները շուտով թափ պիտի տան նկարին շրջագիծը ու դուրս պիտի ժայթքեն», եզրակացուց ժպտով:

Սիլվա Ներետեան-Բլատեան, Սարու-խանի թոռնուհին, յանուն ընտանիքին շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք նախաձեռնած էին այս տօնակա-տարութիւնը. ապա նշեց, որ Եգիպտոսի մէջ տիրած բազմամշակութային եւ հա-մերաշխութեան մթնոլորտը սատար հան-դիսացած են որ Սարուխանի տաղանդը ծաղկի: «Օտարներու հանդէպ ոչ մէկ խտրութիւն կար», ըսաւ ան «26 ամեայ Սարուխան երբ նետուեցաւ երգիծան-կարչութեան ասպարէզէն ներս, ան ոչ իսկ արաբերէն գիտէր»:

Ապա քառասուն վայրկեան տեւող սա-լիկներու համապարփակ ներկայացում մը պատրաստած էր արուեստագէտ-սա-րուխանագէտ Ապտալլա Էլ Սաուին, որ վերջին ութ տարիներու ընթացքին ման-



րամասն ուսումնասիրություններ ըրած է մեծ վարպետին մասին ու հաւաքած շատ անյայտ մնացած տեղեկություններ ու հրատարակություններ:

«Սարուխան կրցած է թափանցել եգիպտոսի եւ եգիպտացիին հոգիներէն ներս եւ պատկերացուցած անոնց քաղաքական տեսակէտներն ու հայրենասիրական ոգին», ըսաւ ան:

Ասուլիսի աւարտին ներկայ արուեստագէտներէն ու երգիծանկարիչներէն ոմաք խօսք առին եւ մեծ գովեստով նշեցին հայերու ներդրումը եգիպտոսի մէջ առհասարակ եւ Սարուխանի ազդեցութիւնը եգիպտական քաղաքական երգիծանկարչութեան մէջ յատկապէս:

Պէտք է յիշել, որ Սարուխանի նուիրուած այս ձեռնարկը Աղեքսանդրիոյ Գրադարանին «Երգիծանկարչութեան յի-

շողութեան վաւերագրում» ծրագրին առաջին աշխատանքն է: Այս ծրագիրը խիստ էական է, քանի որ երգիծանկարչութիւնը վաւերագրելով երկրի մը քաղաքականութիւնը կարելի կ'ըլլայ վաւերագրել:

Նոյն օրը լոյս տեսած Ալ Ախպար օրաթերին մէջ, երիտասարդ տաղանդաւոր երգիծանկարիչ Ամր Ֆահմիի օրուան երգիծանկարը նուիրուած էր այս ձեռնարկին:

Իսկապէս գնահատելի է եգիպտական պատկան մարմիններուն Սարուխանի անունը միշտ վառ պահելու եւ զայն նոր սերունդներուն ծանօթացնելու համար տարած աշխատանքը:

Սօսի Ներքերեան-Յակոբեան

ՅՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐ

Հպարտութեամբ կը տեղեկացնենք, թէ Հելիոպոլսոյ քաղաքապետութիւնը ազնիւ գաղափարը ունեցած է եգիպտահայ երկու արուեստագէտներու՝ Ալեքսանտր Սարուխանի եւ Շանթ Աւետիսեանի տուներուն վրայ զետեղելու անոնց հոն բնակած ըլլալը հաստատող յուշատախտակներ:

Պէտք է յիշեցնել նաեւ, որ 2006 թուականին Գահիրէի փողոցներէն մէկը, Նոր Նուզհաի շրջանին մէջ, կոչուած է Սարուխանի անունով, եգիպտոսի առաջին երգիծանկարիչը ըլլալուն եւ այդ արուեստին մեծ տարողութեամբ սատարելուն որպէս գնահատանք եւ երախտիք:





ՀԱՄԲՈՐԴՈՒԹԵՆԸ ԱՌԱՋ

Համահայկական խաղերուն եւ հայաստանագնացութեան ընդառաջ, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ երիտասարդները գովելի գաղափարը ունեցած են դասախօսութեամբ մը իրենց ընկերներուն ներկայացնելու Հայաստանի տեսարժան վայրերն ու անոնց պատմականը:

Դասախօսութիւնը, որ կազմակերպուած էր տիար Կարէն Թուլումպաճեանի կողմէ, տեղի ունեցած է ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ ակումբէն ներս, 30 Յուլիս 2019-ին:

Դասախօսները հինգ երիտասարդներ

եղած են՝ Ճուլիա Աւանեան, Մանէ Ճիգմէճեան, Արեգ Արգարեան, Լորիկ Տրդատեան եւ Մարինա Սիմոնեան:

Բոլոր ներկաները մեծ հետաքրքրութեամբ հետեւած են ներկայացուած նիւթերուն, խանդավառ՝ իրենց մօտեցող ճամբորդութեամբ եւ հետաքրքրուած լսելու համար պատմականը այն յուշարձաններուն, որոնցմէ ոմանք նախկին ճամբորդութիւններէ արդէն ծանօթ են իրենց:



ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 7-ՐԴ ԽԱՂԵՐԸ

2019-ի Օգոստոս 6-ին Համահայկական խաղերուն բացումը տեղի ունեցաւ Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ, ներկայութեամբ Արցախի Հանրապետութեան նախագահին եւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի:

Այս տարի խաղերուն կը մասնակցէին 35 երկիրներու 161 քաղաքներէն եկած 5244 մարզիկներ, 17 տարբեր մարզաձեւերու մէջ մրցելու համար:

Բացման հանդիսութիւնը սկսաւ թատերական շքեղ ներկայացումով մը, ուր կը պատկերացուէին հայոց պատմութեան շքեղագոյն էջերէն դրուագներ, սկսելով հեթանոսական շրջանէն, անցնելով Տիգրան Մեծի աշխարհակալութեան օրերը, հասնելու համար մինչեւ Արցախեան ազատամարտն ու մեր օրերը:

Ներկայացման ամբողջացումէն ետք մարզադաշտ մուտք գործեցին մարզական խումբերը իրենց երկիրներու դրօշներով, որոնց առջեւէն հպարտօրէն կը ծածանէին Հայաստանի եւ Արցախի դրօշները:

Համահայկական Խաղերուն դրօշը կը կրէին ողիմպիական խաղերու ախոյեաններ Իսրայէլ Միլիտոսեան, Արեւիկ Կարսեան, Մարիկ Նասիպեան, Տիգրան Մարտիրոսեան, Գաբրիէլ ...գսեան եւ Արամ Մարգարեան:

Մարզիկներու անունով երգում կատարեց Նայիրի Մանուկեան, իսկ իրաւարարներու անունով երգում կատարեց Սուրէն Պրազեան:

Խաղերուն ջախը վառեցին Արցախի Առաջնորդ Պարգեւ Սրբազան, Համահայկական խաղերու հիմնադիրներէն Ալպէր Պոյաճեան եւ ախոյեան Հրաչեայ Պետիկեան:

Համահայկական Խաղերու կոմիտէի նախագահ Իշխան Զաքարեանի խօսքէն ետք խօսք առին Արցախի նախագահ Բակօ Սահակեան եւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

Խաղերը տեղի ունեցան նախ Արցախի, ապա Երեւանի մէջ, որոնց ընթացքին եզիպտահայ մարզիկները բաւական լաւ արդիւնքներ արձանագրեցին:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՈՎ

Հայաստանի Ազգային Գրադարանին Ներս

Հայաստանի ազգային գրադարանի հիւրերն էին Եգիպտոսի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ տիար Օննիկ Պըլըքտանեան, ՀԲԸՄ-ի Գահիրէի մասնաճիւղի ատենապետ տոքթ. Վիգէն Ծիզմէճեան եւ Գահիրէի Երուանդ Աղաթօն գրադարանի գրադարանավար, արխիւներու պատասխանատու եւ «Տեղեկատու» եռամսեայի խմբագիր դոկտ. Մարուշ Երամեան:

Հայաստանի Ազգային Գրադարանի տնօրէն տիար Հրաչեայ Սարիբեկեանի հետ զրոյցի ընթացքին հիւրերը խօսեցան գրադարանին հետ շարունակական եւ երկարատեւ համագործակցութեան իրենց պատրաստակամութեան մասին, շեշտելով գրադարանին կարելորութիւնն ու հայ գրքի պահպանումին մէջ անոր ունեցած անուրանալի աւանդը: Քննարկուեցան Ազգային Գրադարանի ելեքտրոնային շտեմարանները սփիւռքի տպագիր մամուլով շարունակաբար հարստացնելու, եգիպտահայ գրողներու գիրքերէն օրինակներ Ազգային Գրադարանին նուիրելու եւ այլ հարցեր:

Եգիպտահայ հիւրերը Ազգային Գրադարանին նուիրեցին Գահիրէի ՀԲԸՄ-ի «Տեղեկատու» պաշտօնաթերթին 1996-2016 թուականներու 5 հատորնոց ամբողջական հաւաքածոները, ինչպէս նաեւ



պարբերականին նորագոյն համարը: «Տեղեկատու»-ի խմբագիր դոկտ. Մ. Երամեան նշեց, որ նախորդ համարներու կազմուած հատորները երբ պատրաստ ըլլան, դարձեալ կ'ուղարկուին Ազգային Գրադարանին եւ իր կողմէ Ազգային գրադարանին նուիրեց իր հեղինակած «Ուրուանկար 1965-1995 թուականներու սփյուռքահայ բանաստեղծութեան» հատորն ու իր խմբագրած Երուանդ Աղաթօնի «Պոլսոյ 1860-ի եւ Գահիրէի 1906-ի բարեգործականներուն ծնունդը եւ պատմութիւնը» գիրքը:

Այնուհետեւ հիւրերը պտըտեցան [Գրատպութեան թանգարանը](#), որ կը գտնուի Ազգային Գրադարանի շրջափակին մէջ:

Քաղուած Հայաստանի Ազգային Գրադարանի կայքէջէն





ԱՐԹՕ ՉԱՔՄԱՔՃԵԱՆ

(1933-2017)

Ընթացիկ տարուան Հոկտեմբերի առաջին օրը իր աչքերը կը փակեր Եգիպտոս ծնած գանատահայ քանդակագործ Արթո Չաքմաքճեան, որուն համբաւը, ինչպէս մեր կարգ մը արուեստագէտներուն պարագային, աւելի տարածուած է արուեստի միջազգային հրապարակին վրայ:

Արթո Չաքմաքճեանի կեանքը կարծես խտացումը ըլլայ հայու կերպարին. Եգիպտոս ծնած, Հայաստան ներգաղթած, ապա Գանատա արտագաղթած քանդակագործին սիրտը սակայն շարունակած էր տրոփել հայրենիքին համար եւ իր կարելին ըրած անոր օգտակար դառնալու:

Անառակ որդիին առակը մեր միտքը կու գայ, երբ կը մտածենք Չաքմաքճեան արուեստագէտին ապրած տառապանքներուն մասին, բայց դերերը շրջուած են անոր պարագային: Դժբախտաբար սակայն այս պարագային «անառակ»ը չունեցաւ հարստութիւնը գրկելու իր զաւակներուն ամենէն տաղանդաւորներէն մին...

Իրապէս ալ ոչ թէ մէկ, այլ կրկնակի անգամ ապրուած դառնութիւն մը եղած է հայրենիքը քանդակագործին համար, առաջինը խտացած իր Կոմիտասի արձանին պարագային ու երկրորդը՝ «Քալոդ մարդը»ին պարագային:

Սակայն դառնութիւնը բնաւ պատճառ չէ եղած, որ Արթո Չաքմաքճեան գայ Հայաստան եւ երիտասարդ արուեստագէտներու համար վարպետութեան դասընթացքներ (master classes) տայ: Երիտասարդները իրենք կը խոստովանին, որ Չաքմաքճեան արուեստագէտին հետ հաղորդակցութիւնը իրենց համար «օդի ու ջրի նման մի բան էր»:



«Արուեստը կը փոխուի, **իզմ**երը կը փոխուին, բայց մէկ բան անփոփոխ կը մնայ, - ըսած է քանդակագործը, - մարդկայինը, որ Եգիպտական արուեստէն մինչեւ ժամանակակից արուեստը անփոփոխ է»:

Իր խօսքերով ինք տուած է յստակ բացատրութիւնը իր քանդակներուն, որոնք շատերու համար «անհասկնալի» կը մնան.

«Իմ դիմաքանդակներուս մէջ կան գործեր, որոնք դուրս են դիմաքանդակի ընդունուած չափանիշերէն. իմ քանդակներս պայմանաւոր չեն բնորոշներով, անոնց մէջ ֆիզիքականը չէ որ կայ. անոնք ի՛մ մտայղացումով ստեղծուած կերպարներ են, որոնց ներաշխարհը հարազատ է իմ ստեղծագործական ներաշխարհիս եւ մտածողութեանս»:

«Երբ դիմաքանդակներ կը ստեղծեմ, բնորդին դէմքը քիչ կը հետաքրքրէ զիս. ես այդ մարդուն ներաշխարհը կը տեսնեմ եւ այդ աշխարհին է որ քանդակի կը վերածեմ, առանց օգտագործելու անոր ֆիզիքականը: Իմ բոլոր քանդակներուս պարագան նոյնն է, որովհետեւ մարդկային հարցեր կը շօշափեն անոնք»:

Երբ Կոմիտասի կոտորուած արձանը իր տան առջեւ նետուած կը գտնէ, արուեստագէտը կ'որոշէ հեռանալ Հայաստանէն ու կ'ըսէ.

«Հեռացայ Հայաստանէն, որպէսզի շարունակեմ սիրել զայն»:

1933 թուականին Եգիպտոս ծնած արուեստագէտը զաւակն է գրավաճառի մը եւ թոռը՝ քանդակագործի մը: 12 տարեկանէն սկսած է «խաղալ» կաւին հետ, որ իր խորունկ ազդեցութիւնը ձգած է անոր կեանքի յետագայ ուղիին վրայ:

1948-ին ընտանիքով կը ներգաղթէ Հայաստան, իսկ 1975-ին կ'երթայ եւ վերջնականապէս կը հաստատուի Գանատա:

Իր քանդակները կը գտնուին աշխարհի ամենէն յարգելի ցուցասրահներուն եւ թանգարաններուն մէջ, Թրէթեաքովեան ցուցասրահէն մինչեւ Օքսֆորտի եւ Սթէնֆորտի համալսարաններն ու Բրիտանիոյ թագաւորական ակադեմիայի հաւաքածոները: Կոթողային քանդակները կը գտնուին Թորոնթոյի, Տիթթոյի եւ Նիւ Ճորջիի մէջ: Անդամ եղած է Գանատայի արուեստի թագաւորական ակադեմիային:

«Կոմիտասի կերպարը կեանքիս մշտական ընկերակիցը եղած է. հայ ժողովուրդի բոլոր ապրումները անոր միջոցով կ'արտայայտեն: Նոյնն է Նարեկացիի պարագան»:

«Յաճախ արուեստի մէջ կը խօսուի ազգայինին եւ համամարդկայինին մասին: Ինծի համար այս երկու երեւոյթներուն միջեւ տարբերութիւնը շատ մեծ է՝ ազգայինը միշտ չէ որ մարդկային է, բայց մարդկայինը իր մէջ միշտ ազգային յատկանիշեր ունի. ասիկա շատ կարեւոր է, որովհետեւ երբ կը սահմանափակուինք

ազգայինով, կը կորսնցնենք մարդկային յատկանիշը եւ ասիկա կը պատճառաբանենք մեր փոքր ազգ ըլլալու իրողութեամբ. ճիշդ չէ. միայն համամարդկային հարցեր դնելով է որ կրնանք արուեստի միջազգային հրապարակին վրայ տեղ ունենալ. մենք նախ մարդ կը ծնինք, ապա՝ ազգային ինքնութիւն կը ստանանք»:

2010 թուականին Եունէսքօն Փարիզի մէջ կը կազմակերպէ Արթօ Չաքշաքճեանի անհատական ցուցահանդէսը:

«Արուեստն ալ լեզու է, ինչպէս ֆրանսերէնը, գերմաներէնը եւ մնացեալ լեզուները: Մարդ մինչեւ այդ լեզուն չսորվի, չի կրնար արուեստի գործին ամբողջութիւնը ընկալել, որովհետեւ, օրինակ, մարդը միայն ֆիզիքական աչք չէ որ ունի, այլ նաեւ երկրորդ՝ ներքին աչք մը, զոր մշակելով է միայն որ կրնայ արուեստի գործը լրիւ ընկալել»:

Իր կորուստով կը կորսնցնենք մէկը այն արուեստագէտներէն, որոնք հայու անունը բարձրացուցած են արուեստի միջազգային հրապարակ, իրենց անկրկնելի եւ ժամանակը զանցող արուեստի գործերով:



«Մահիկն համբոյրը» փարբերակ Ա.



«Մահիկն համբոյրը» փարբերակ Բ. յապրուկ Վարդ եւ Նուէր Ալեքսանեաններուն, իրենց ամուսնութեան քառասնամեակին առիթով:



ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԿԱՊԸ՝ ՄԻԱՆՄԱՐԻ ՀԱՅԵՐԸ

Միանմարի մէջ ասկէ քանի մը տասնամեակներ առաջ հայեր ապրած են, սակայն այսօր անոնց թիւը շատ փոքր է:

Այսօր հայերը Եանկոնի մէջ Սուրբ Յովհաննու Մկրտիչի անունով եկեղեցի մը ունին, որ Եանկոնի առաջին քրիստոնեայ եկեղեցին կը համարուի եւ ուր մինչեւ օրս հայկական պատարագ կը կատարուի, առաւելագոյնը ... տասը հաւատացեալներով: Իսկ պատարագիչը՝ Հայաստան ծնած քահանայ մը՝ Արծրուն Միքայէլեան, ընդհանրապէս երկու շաբաթը անգամ մը կու գայ Հնդկաստանի Քոլքաթա քաղաքէն:

«Երբեմն թիւը աւելի մեծ կ'ըլլայ, - կ'ըսէ տիկին Րաշէլ Մինաս, որ եկեղեցւոյ մէջ եռանդով շարականներ կ'երգէ, - բայց ոչ աւելի քան տասը, թէեւ շատ յատուկ օրերու կրնայ քիչ մը աւելի ըլլալ»:

Րաշէլն ու հայրը՝ Ռիչըրտ, որ պատարագիչ քահանային օգնական է, Միանմարի մէջ ծնած են եւ հոն ալ մեծցած:

Միանմարի «գաղութը» կը բաղկանայ հինգ անձերէ, որոնք պատարագին ներկայ գտնուող նոյն հինգ անձերն են եւ երեք տաբեր երկիրներէ կը գան, բայց զիրենք կը միացնէ ինքնութեան գիտակցութիւնը, բան մը, որ ամբօրէն կը կապէ Միանմարի փոքրաթիւ հայերը, թէեւ անոնք յաճախ չէ որ եկեղեցի կու գան:

«Ընտանիքի պէս ենք հոս, - կ'ըսէ քա-



հանան՝ Տէր Արծրուն Միքայէլեան:

Միանմարը ժամանակին վաճառականներէ եւ դիւանագէտներէ բաղկացած բաւական բարգաւաճ գաղութ մը եղած է, թէեւ այնքան քիչ բան հասած է մեզի անոր մասին: 17-րդ դարուն կազմաւորուած գաղութ մը, մետաքսի վաճառականութեան համար հոն հաստատուած հայերէ կազմուած, որոնք իրենց բազմազան լեզուներու գիտութեամբ կրցած են թափանցել երկրին արքունիքէն ներս: Աւելի ուշ, Անգլիական գաղութատիրութեան օրերուն, հայերը աշխատած են որպէս թարգմաններ եւ պաշտօնեաներ Բրիտանական կայսրութեան:

2014 թուականին Ամենայն հայոց Կաթողիկոս Ս. Տ. Գարեգին Բ. այցելած է Եանկոնի Ս. Յովհաննու Մկրտիչ եկեղեցին:



ԹԵ ԻՆՉՈՒ

ՉԻՆԱՑԻՆԵՐԸ ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ՍՈՐՎԻՆ

Աշխարհին բացուելու նախագահ Ջի Եին Փինկին ծրագիրը կը միտի զարգացնել ոչ միայն Չինաստանի էքոնոմիկն, այլ նաեւ երիտասարդներուն միտքը:

Ծրագիրը կը կրէ Belt and road initiative անունը:

Չինաստանի նախագահին այս ծրագիրը, որ սկսած է 2013-ին, կը փորձէ վերակենդանացնել պատմական «մետաքսի ճանապարհ»-ին տնտեսական հզօրութիւնը. չինական ընկերութիւններ արդէն աւելի քան յիսուն պիլիառ տոլար ներդրում ունեցած են տարբեր երկիրներու մէջ: Այս աշխատանքներուն զարկ տալու համար տաղանդաւոր երիտասարդներ ներգրաւուած են:

Այս ծրագիրը այնքան կարելոր է, որ մաս կը կազմէ Չինաստանի 2010-2016-ի հնգամեայ փլանին. 2016-ին միայն բազմահազար երիտասարդ չինացիներ գացած են մետաքսի ճանապարհին մաս կազմող տարբեր երկիրներ, տեղական լեզուները սորվելու համար: Իսկ չինական համալսարանները, որոնք նախապէս միայն աշխարհի կարելոր քանի մը լեզուները կը դասաւանդէին, ինչպէս ֆրանսերէն եւ սպաներէն, սկսած են դասաւանդել այնպիսի լեզուներ, որոնց մասին չինացիները գաղափար իսկ չունին:

Հի Եանկ հայերէն լեզուի աշակերտուի է Երեւանի Պետական համալսարանէն ներս, պետական վերոյիշեալ ծրագրին միջոցով Հայաստան եկած:

Պէճինկ բնակող հայերէն լեզուի դասախօս Մէրի Կնեազեան հայկական ուսումնասիրութիւններու ծրագիր մը սկսած է կազմել, որ առաջինը պիտի ըլլայ Չինաստանի մէջ: Դասախօսներ պատրաստելու համար չինական կառավարութիւնը երկու ուսանողներ ըրկած է

Հայաստան, որոնք մագիստրոսական աստիճանի տիրանալէ ետք, պիտի վերադառնան եւ դասաւանդեն համալսարանէն ներս, ուր դասախօսներու մեծամասնութիւնը վարդապետական աստիճանի տիրացած է:

«Լեզուն փափուկ ոյժի մաս կը կազմէ» կ'ըսէ Կնեազեան, խօսելով Չինաստանի մէջ քիչ ծանօթ լեզուներու

հանդէպ վերջերս ծայր առած հետաքրքրութեան մասին, «Լեզուն լաւագոյն միջոցն է երկրի մը ժողովուրդին մշակոյթը հասկնալու համար»:

Հայկական ուսումնասիրութիւններու շաբաթական դասընթացքներուն, որոնց կրնան մասնակցիլ համալսարանական եւ ոչ համալսարանական անձեր, լեզուի կողքին կը ներկայացուին արխիւային ֆիլմեր, հայոց պատմութիւն եւ հայկական խոհանոց: Կնեազեան կ'ըսէ, թէ կարգ մը աշակերտներ այնքան հետաքրքրութիւն ցոյց տուած են այս դասընթացքներուն, որ ճամբորդած են Հայաստան, իրենց աչքերով տեսնելու համար վեց հազար տարիներու պատմութիւն ունեցող այդ երկիրը:

Կը մնայ հետեւիլ եւ տեսնել թէ ինչպէ՛ս լեզուի եւ մշակոյթի իմացութիւնը պիտի ստարէ Չինաստան-Հայաստան կապերու ամրապնդումին:

Հի Եանկ արդէն իսկ սկսած է քաղել հայերէն սորվելու իր ճիգերուն արդիւնքը:

«Երբ հայերէն կը խօսիմ, մարդիկ Հայաստանի մէջ աւելի ընկերային կը դառնան, իսկ երբ հայերէնով կը սակարկեմ, շատ լաւ զեղջեր կու տան ինծի» կ'ըսէ Հին խնդալով:

Քաղուած The Week in Asia հանդէսէն



ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

Շատ հին տարեցոյցէ մը (1942) կը քաղենք այս գողտրիկ քերթուածը, որ ստորագրուած է եգիպտահայ մանկավարժուհիի մը կողմէ:

Զարուհի Ծաղկունի (Գանթարճեան) ծնած է 1898-ին Ատանա (Կիլիկիա) եւ ուսումը ստացած ծննդավայրին Աշխէնեան Ազգ. վարժարանէն ներս:

1923-ին հաստատուած է Գահիրէ եւ կոչուած է ուսուցիչի եւ աղջկանց ընդհանուր հսկիչի պաշտօնին, Գալուստեան Ազգ. վարժարանէն ներս, մինչեւ 1932:

Տարիներու իր նուիրումին եւ աշխատանքին համար 1959 թուականին Հայրապետական Օրհնութեան կոնդակ մը ստացած է Վազգէն Ա. վեհափառէն:

Պէտք է յիշել, որ տիկին Զարուհի Ծաղկունի Պոլսոյ մէջ իր ուսանողութեան շրջանին բազմաթիւ մեծանուն ուսուցիչներ ունեցած է, ինչպէս Դանիէլ Վարուժան, Տիգրան Զեօկիւրեան, Զապէլ Զաքարեան եւ ուրիշներ:

Յետագայ քերթուածին տողերն ու անոր շարժառիթը կը ստիպեն, որ այստեղ անգամ մը եւս յիշենք եգիպտահայ այս մոռցուած անունը եւ յարգենք անոր կեցուածքը անմահ Կոմիտասի հանդէպ:



Գեղաքանդակ նուագ մ'էիր դուն ինքնին,
Աստուածակերտ եւ աստղահիւս մէկ քընար,
Որուն բիրեղ լարերուն մէջ ձայնածին,
Հոգիդ համակ երգ մը եղաւ անսպար:

Երգ ու երգող հըմայքիդ մէջ նոյնացաւ,
Գողթան երգիչ՝ նոր օրերու բազմալար,
Հայ սարերէն շունչդ եկաւ ու անցաւ,
Տուաւ լեզու, գոյն ու գեղգեղ ու հանճար:

Ոսկեհատիկ, ոսկեհատի՛կ ժողվեցիր
Մեր աւիւնոտ եւ արեւոտ արտերէն՝
Հողէն, Մաճէն, Հարսէն, Եարէն՝ ցանուցիր,
Գեղջուկ երգեր յօրինեցիր համօրէն:

Ալազեազէն ձայներ տուիր հովերուն,
Հովեր եկան «տարտիս տարման չը տարան»,
Կռունկն անցաւ հայրենիքէդ՝ նոր գարուն,
բայց անխապրիկ դուն մնացիր յաւիտեան:

Կայծակնահար՝ նման կոճղի մը հըսկայ,
Ինքզինքիդ մէջ դուն ապրեցար փլատակ,
Աշխարհ քեզի, դուն աշխարհին անըզգայ՝
Մեռեալ խորհուրդ եւ կենդանի նահատակ:

Ալ հանգչեցար Եղեմին մէջ օրհնաբեր,
Հոգիդ հազաւ իմաստութեան տարազէն,
Երգըդ յարեաւ գերագոյնին առընթեր,
Ուր կեանքն արդէն՝ երգ ու նուագ է կ'ըսեն:

Նետէ՛ վերէն, երգ երգոցէդ մէկ քընար,
Ինչպէս Եդիան՝ կառքին մէջէն հրեղէն,
Իր վերարկուն, Եդիսէին ձրգեց վար
Իբրեւ ժառանգ աստուածային հանճարէն:

Այդ քընարով տար աշխարհէն հեռակայ,
Օրհներգելով Քու աճիւնըդ սրբազան,
Էջմիածնայ Սուրբ Տաճարին իբր ընծայ,
Պիտի տանինք նորակառոյց Հայաստան:

Զարուհի Ծաղկունի

Գահիրէ 1942



ԳԱՀԻՐԷԻ ՀԱՆՐԱԿԱՌՔԵՐԸ ԵՒ ԵՍ

«Կեցե՛ք, խնդրեմ», գոչեց երիտասարդ հեւասպառ կին մը, զարնելով փակ դրան հանրակառքին, որուն անիւր տակաւին մէկ շրջան իսկ չէր ըրած կայարանէն հազիւ թէ շարժած, յուսալով որ արձանի պէս անշարժ, վերջին ծայր մաքուր-կոկիկ հագած, աչքերը ճամբուն սեւեռած վարորդը պիտի բանար դուռը ու ներս առնէր զինք:

Փարիզի մէջ, ուր հանրակառքերու ճշդապահութեան վրայ կրնանք ժամացոյց ճշդել, որոնց մէջ եկեղեցիի լռութիւն կը տիրէ նոյնիսկ երբ բերնէ-բերան լեցուն են, պատուհաններուն ապակիները տան ապակիներէն աւելի մաքուր են եւ վարորդները աւելի պատկառելի են քան նախարարները, այս տեսակ գիջում անկարելի է որ պատահի: Հանրակառքին դուռը փակ էր, ինչպէս վերջին դատաստանին արքայութեան դուռը պիտի ըլլայ մեղաւորներուն դիմաց:

Մտովի Գահիրէ փոխադրուեցայ, ուր մի քանի օրեր առաջ քաղաքէն Հելիոպոլիս կ'երթայի հանրակառքով: Վերջակայանը հասնող ու նոր ճամբայ ելլող հանրակառքերը մուխերու ու աղմուկի շէն հանդիպումով կը բաժնուէին իրամէ, յայտնի չըլլալով թէ ո՛րն էր հասնողը եւ ո՛րն էր մեկնողը:

Մարդոց կեանքը դիւրացնելու միտումով, հանրակառքերուն առջեւի եւ ետեւի դռները բաց կը մնան միշտ, նախ օդը զով ու թարմ պահելու եւ յետոյ ուղեւորներուն մուտքն ու ելքը կարելի ընելու հանրակառքին գնացքին ժամանակ: Հազիւ թէ խճողումի պատճառաւ ընթացքը դանդաղի, ճարպիկ ու փորձառու երիտասարդներ ու նոյնիսկ տարիներու ընթացքին լաւ մարզուած տարեց այրեր կը բարձրանան ու կ'իջեն, ո՛ր որ իրենց յարմար ըլլայ:

Մի քանի տարիներէ ի վեր հանրակառքերը դադրած են կայարաններ ունենալէ, այլ կ'աշխատին վարձակառքերու (Taxi) դրութեամբ, այսինքն ո՛ր որ յաճախորդը ձեռքով նշան ընէ, վարորդը հանրակառքը կը կեցնէ նոյնիսկ ամենաբանուկ փողոցին մէջտեղը, առանց կարեւորութիւն տալու ետին ընդոստ կանգ առած ինքնաշարժերուն:

Եթէ ուղեւորը առողջ է ու արագաշաժ, ան ակնթարթի մը մէջ կը բարձրանայ եւ հանրակառքը կը շարունակէ իր ճամբան: Սակայն, շատ յաճախ, գիրուկ կին մը առանձին կամ պզտիկներով, դողդոջուն տարեց այր մարդ մը, անթացուպով մէկ ոտքը անդամալոյծ մը կամ նոյնիսկ կոյր մը կ'ըլլայ հանրակառք բարձրանալ ուզողը: Այս պարագային փողոցէն անցորդ մը կամ հանրակառքին մէջէն շրջահայեաց անձ մը անպայման կը հասնի օգնութեան. մարդս մարդով է վերջապէս ...:

Հակառակ որ հանրակառքին ճակտին գրուած կ'ըլլան ուղիին մանրամասնութիւնները, աւելի դիւրին է փողոցէն հարցնել վարորդին կամ տոմսավաճառին, թէ արդեօ՞ք հանրակառքը այս կամ այն շրջաններէն կ'անցնի: Երբեմն ուղեւոր մը որոշ տեղ մը կ'ունենայ հասնելիք, զոր կ'անգիտանայ: Վարորդը, մօտենալուն պէս այդ հասցէին, բարձրաձայն կը կանչէ որ ան պատրաստուի իջնելու: Շուրջի նստողները, օգտակար ըլլալու սիրոյն կը մրցին բացատրութիւններ ու խորհուրդներ տալու իրեն:

Տրուած ըլլալով որ ոչ ոք կը յարգէ հանրակառքին ետեւի դռնէն ելլելու, տոմսը կտրելու եւ առջեւի դռնէն իջնելու դրութիւնը, շատեր առջեւի դռնէն կը բարձրանան հանրակառք. այնուամենայնիւ ոչ ոք կը խուսափի տոմս առնելէ: Նոյնիսկ եթէ տոմսավաճառը գտնուի հանրակառքին ետեւի բաժինը, ուղեւորը դրամը կու տայ ետեւը նստողին, ան ալ իր կարգին կը փոխանձէ զայն իր ետեւին եւ այսպէս, մինչեւ որ գումարը ձեռքէ ձեռք անցնելով հասնի տոմսավաճառին: Պաշտօնեան դրամը կ'առնէ, եթէ մնացորդ տալիք կայ, զայն կը փաթթէ տոմսին մէջ, որ իր կարգին նոյն պտոյտով կը հասնի ուղեւորին ձեռքը:

Երբ կին մը կամ տարեց այր մը բարձր



րանայ խճողուած հանրակառք, նստած երիտասարդ մը ինքնաբերաբար տեղ կու տայ «հրամէ՛, մայրիկ» կամ «հրամէ՛, հայրիկ» ըսելով: Երբ ուղեւորներէն մէկուն հեռախօսը հնչէ, բոլորը ունկնդիր կ'ըլլան բարձրաձայն խօսակցութեան, երբեմն նոյնիսկ կարծիք կը յայտնեն իրենց լսածին մասին:

Հանրակառքերուն վարորդներէն ոմանք անհանդուրժող ու ցասկոտ տրամադրութեան տէր կ'ըլլան: Մեղադրելի չեն, իսկապէս ծանր է օրական ութ ժամ սաստիկ խճողումի մէջ երթալ-գալ նոյն ճամբան: Ուրիշներ, ընդհակառակն, կ'ըլլան հեզահամբոյր, կը կատակեն ուղեւորներուն հետ, կը խօսին քովի հանրակառքերու վարորդներուն հետ, պատուհանէ պատուհան իրարու ծխախոտ կամ ջուր կը հրամցնեն:

Ճամբորդութեան ծանձրոյթը փարատելու միջոցներ ստեղծուած են Գահիրէի հանրակառքերուն մէջ, շնորհիւ շրջուն վաճառորդներուն, որոնք յանկարծ կը յայտնուին ու թութակի պէս բարձր ու արագ կը ջատագովեն իրենց աժաննոց ապրանքը՝ ապահով ասեղներ, մկրատներ, սանտրեր, գուլպաներ, band-aid, չոր մելաններ, մատիտներ եւ նոյնիսկ պզտիկներու համար գիրքեր:

Ուրիշ ծախողներ իրենց ապրանքներէն հատ-հատ կը տեղաւորեն նստողներուն գիրկը, օրինակ թուղթէ թաշկինակի փոքր տոպրակներ, ծամոն, շաքար ու քովքը կ'ընեն անոնց որակին ու յարմար գինին: Ով որ ուզէ, գինը կը վճարէ ու կը պահէ ապրանքը, թէ ոչ ծախողը աճապարանօք կը հաւաքէ զանոնք ու կ'իջնէ հանրակառքէն, որպէսզի յաջորդին վրայ փորձէ իր բախտը առաւօտէն մինչեւ գիշեր, ամէն օր: Մուրացկաններուն համար եւս արդիւաւէտ հրապարակ է հանրակառքը: Անոնք տարբեր ձեւերով ուղեւորներուն գութը կը շարժեն ու մի քանի ոսկի կը ստանան:

Հանրակառքերուն մէջ տեղի ունեցած առեւտուրի գլուխ-գործոցն է դդում եւ սմբուկ փորելու զործիք ծախողը, որ նոյնիսկ սաստիկ խճողուած եւ ճօճուող հանրակառքին մէջ գործնական կերպով

գովքը հիւսեց իր ապրանքին: Տոպրակի մը մէջէն հանեց թարմ, պիրկ դդում մը, մէկ ձեռքը վեր բարձրացուց դդումը բռնած, պտուտակի պէս ծայրով փորելիքը միւս ձեռքին, ճարպիկ շարժումով մը զսպանակի ձեւով միջուկը հանեց, որ ակնթարթի մը մէջ պատրաստ եղաւ լիցքը ընդունելու: Շատ առիթ չտուաւ մեզի մտածելու, տոպրակէն հանեց փայլուն սեւ սմբուկ մը եւ նոյն ձեւով միջուկազուրկ ըրաւ զայն: Երեք հրաշագործ փորելիքներ մէկ տոպրակի մէջ դրած միայն հինգ եգիպտական ոսկիի կը ծախէր: Ասիկա փախցնելը անհնարին էր, շուրջիներուս նման ես ալ գնեցի:

Ինչ փոյթ թէ հանրակառքին վարորդը չէ ածիլուած, հասարակ շապիկ տաբատ հագած է ու ոտքերը կօշիկի փոխարէն կը հանգչին անորակ մուճակներու մէջ, թէ տոմսավաճառը վարորդին քով, առջեւի ապակիին յենած կը մնայ յաճախ, քանի որ իր տեղը զիջած է յաճախորդի մը, թէ հանրակառքին գետինը խստօրէն սրբուելու կը կարօտի, թէ դուրսի տեսարանը խճանկարի նման կ'երեւի պատուհաններուն վրայի փոշիներուն մէջէն, թէ հանրակառքին մեքենան կը տքայ ու կը հեւայ սաստիկ խնամքի կարօտէն...:

Աւելի կարելոր չէ՞ երիտասարդներուն յարգանքը կիներուն ու տարեցներուն հանդէպ, բոլորովին անծանօթներու իրարու օգնելու կամեցողութիւնը, ապահով զգալու առաւելութիւնը, շուրջիներուն հետ խօսքի բռնուիլն ու գնում ընելով տեղ հասնիլը:

Ճիշտ է թէ Գահիրէի ո'չ ժողովուրդը, ո'չ ալ հանրակառքերը կը հետեւին երթելութեան տարրական օրէնքներուն, սակայն զիրենք կը կառավարէ մարդկայնութեան աներեւոյթ, մոգական գաւազանը:

Սօսի Ներսիսեան-Յակոբեան

Հ.Մ.Ը.Մ. ԿԱՄՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Եգիպտահայ պասքեթ-պոլի տարեկան մրցաշարքերու ծիրէն ներս, 6, 7 եւ 8 Սեպտեմբեր 2019-ին տեղի ունեցաւ Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ. Կամքի մրցաշարը, հովանաւորութեամբ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի՝ Բարեխնամ Առաջնորդ եգիպտահայոց եւ նախագահութեամբ Տէր եւ Տիկին Կարի Պօհնալեանի:

Ուրբաթ օրուան առաջին մրցումը Հ.Մ.Ը.Մ. Արարատի եւ Հ.Մ.Ը.Մ. Կամքի երէց աղջիկներու խումբերուն միջեւ էր եւ աւարտեցաւ ի նպաստ Արարատի աղջիկներուն, 42-22 արդիւնքով:

Յաջորդ խաղը հիւրընկալ ակումբին եւ Սրբուհի Թերեզայի երէց տղոց խումբերուն միջեւ էր: Սկիզբը ուժերը գրեթէ հաւասար էին եւ մինչեւ երրորդ քառորդախաղը յայտնի չէր թէ որ խումբը յաղթական պիտի հանդիսանար: Չորրորդ քառորդախաղին էր որ Սրբուհի Թերեզայի տղաքը արդիւնքի առաւելութիւն ձեռք բերին, պահեցին ու մրցումը աւարտեցաւ ի նպաստ իրենց, 61-49 արդիւնքով:

Շաբաթ օրուան յայտագրին վրայ երեք մրցումներ կային. առաջինը Հ.Մ.Ը.Մ. Արարատի եւ նախորդ օրուան յաղթական՝ Սրբուհի Թերեզայի երէց տղոց խումբերուն միջեւ էր:

Մինչեւ կիսախաղ արդիւնքը շատ ցած էր՝ 29-23, ի նպաստ Հ.Մ.Ը.Մ. Արարատին, սակայն երկու խումբերն ալ բարելաւելով իրեց խաղը արդիւնքը բարձրացուցին ու մրցումը աւարտեցաւ 76-54, ի նպաստ Արարատի տղոց:

Օրուան երկրորդ մրցումը Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ երէց աղջիկներու խումբերուն միջեւ էր: Աղեքսանդրիոյ աղջիկները շատ լաւ խաղարկութեամբ զարմացուցին թէ՛ մրցակից խումբը եւ թէ՛ ալ մարզասէր հասարակութիւնը ու արժանի եղան բոլորին գնահատանքին: Կիսախաղի աւարտին արդիւնքը 40-34 էր, ի նպաստ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ: Շատ հետաքրքրական, արագ ու մաքուր խաղ մը հրամցուցին երկու խումբերն ալ ու մրցումը աւարտեցաւ 80-53 արդիւնքով, ի նպաստ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներուն:



Նախքան օրուան երրորդ մրցումին սկսիլը, բոլոր մասնակից մարզիկները տողանցքով օրինաւոր բացումը կատարեցին Հ.Մ.Ը.Մ. Կամքին հիմնովին նորոգուած պասքեթ-պոլի դաշտին ու հանդերձարաններուն: 107 տարեկան հինաւուրց մարզարանը արդիական գեղեցիկ կերպարանք ստացած էր:

Օրուան վերջին մրցումը Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻներու երէց տղոց միջեւ էր: Սկիզբէն Գահիրէի խումբը առաւելութիւն արձանագրեց ու խաղը աւարտեցաւ 71-59 արդիւնքով:

Ամէն տարուան նման, այս տարի եւս Հ.Մ.Ը.Մ. Կամքի վարչութիւնը ընտանեկան ընթրիք կազմակերպած էր ակումբին դաւարագեղ պարտէզին մէջ, ուր հաճելի երեկոյ մը անցուցին բոլոր մարզիկները, Գահիրէէն ժամանած համակիրներն ու աղեքսանդրիահայ հասարակութիւնը:

Կիրակի օրուան աւարտականները Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի երէց աղջիկներու եւ տղոց խումբերուն միջեւ էին: Երէց աղջիկներուն խաղը սկսաւ ու շարունակուեցաւ արագ ու հետաքրքրական եւ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մարզիկուհիները, գերազանց ու գեղեցիկ խաղարկութեամբ, արժանի եղան յաղթական հանդիսանալու 69-40 արդիւնքով: Խմբապետուհի Նայիրի Յակոբեան-Գալընեան ստացաւ բաժակը, որ նուիրուած էր Տէր եւ Տիկին Ճորճ Լէյլէկեաններու կողմէ:

Երէց տղոց մրցումը, Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի միջեւ,



հետաքրքրական էր, սակայն մտահոգիչ առաջին խումբի համակիրներուն համար եւ յուսադրիչ՝ երկրորդիններուն համար: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ բարձրորակ խումբը շփոթութեան մատնուած սկսաւ առաջին քառորդախաղը, ուր Արարատը կարողացաւ առաւելութիւն արձանագրել:

Սակայն ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը, հետզհետէ ձերբազատուելով իրենց սխալներէն, բարելաւեցին խաղը, հաւասարեցան, անցան ու յաղթական հանդիսացան 83-67 արդիւնքով: Խմբապետ Հրազ-

դան Գալընեան ստացաւ բաժակը, որ նուիրուած էր Թոփալեան ընտանիքին կողմէ, ի յիշատակ ողբ. Յովսէփ Թոփալեանի:

Մրցաշարքին բոլոր մետալները նուիրուած էին Տէր եւ Տիկին Վարդ Ալեքսանեանի կողմէ:

Վարձքը կատար Հ.Մ.Ը.Մ. Կամքի վարչութեան :

Սօսի Ներերեան-Յակոբեան



ԳԱՀԻՐԷԻ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տարեկան եգիպտահայ պասքեթ-պոլի մրցաշարքը տեղի ունեցավ Ուրբաթ 4, Շաբաթ 5 եւ Կիրակի 6 Հոկտեմբեր 2019-ին եգիպտական զինեալ ուժերու յաղթանակին 46-րդ տարեդարձին առթիւ, հովանաւորութեամբ Գերշ. Տ. Աշոտ Ս. Եպս. Մնացականեանի, բարեխնամ առաջնորդ Եգիպտոսի թեմին եւ Նախագահութեամբ տոքթ. Եւտիկին Գէորգ Երզնկացեանի՝ ատենապետ Կոկանեան Սրահի:

Ուրբաթ օրուան յայտագիրը սկսաւ Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Աղեքսանդրիայէն Հ.Մ.Ը.Մ. Կամքի երեք աղջիկներու խումբերուն միջեւ: Թէպէտ Կամքի աղջիկները բաւական հասակաւոր էին եւ ներդաշնակ եւ ուժեղ խումբի տպաւորութիւն ձգեցին երբ դաշտ մուտք գործեցին, սակայն շատ փորձի կը կարօտին, մանաւանդ որ դժուար կացութեան մատնուած էին, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներուն արագ եւ ինքնավստահ խաղարկութեան պատճառով: Մրցումը աւարտեցաւ 55-23 արդիւնքով, ի նպաստ հիւրընկալ խումբին:

Երկրորդ մրցումը Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի երեք աղջիկներուն միջեւ էր: Տրուած ըլլալով որ Աղեքսանդրիոյ խումբէն երկու գլխաւոր մարզիկուհիներ կը բացակայէին, խաղը միակողմանի էր եւ Արարատը կարողացաւ դիւրաւ յաղթել, 46-27 արդիւնքով:

Օրուան վերջին մրցումը հիւրընկալ ակումբին եւ Հ.Մ.Ը.Մ. Կամքի երեք տղոց խումբերուն միջեւ էր. ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ լաւագոյն մարզիկները, թիւի մեծ առաւելութիւն արձանագրելէ ետք, խաղը վստահեցան պատանիներուն, որոնք գերազանցեցին զիրենք եւ խաղը աւարտեցաւ 78-33 արդիւնքով, ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն:

Շաբաթ, 5 Հոկտեմբերի առաջին մրցումը Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Սրբուհի Թերեզայի երեք տղոց խումբերուն միջեւ էր: Խիստ միակողմանի էր մրցումը, հակառակ որ Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մարզիչը խաղը յանձնած էր պատանիներուն ու նորեկներուն, սակայն անոնք եւս բարձրորակ խաղարկութեամբ Սրբուհի Թերեզայի խոնարհ խումբը պարտութեան մատնեցին, 78-32 արդիւնքով:

Փամանակը եկած էր երեք աղջիկներու աւարտական մրցումին՝ Նախորդ օրուան յաղթական ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի խումբերուն միջեւ: Թէպէտ խաղը



սկսաւ լարուած ջիղերով եւ առաջին քառորդախաղի աւարտին արդիւնքը միայն 20-10 էր, ի նպաստ հիւրընկալ խումբին, սակայն երկրորդ քառորդախաղին ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խումբը ցոյց տուաւ իր հմտութիւնը եւ իրերաւորդ յաջող արձակումներով արդիւնքի անհասանելի տարբերութիւն մը արձանագրեց, յուսահատութեան մատնելով մրցակից աղջիկները: Երրորդ եւ վերջին քառորդախաղերուն այլեւս տարակոյս չկար, թէ որ խումբը յաղթական պիտի հանդիսանար: Մրցումը աւարտեցաւ 73-46 արդիւնքով, ի նպաստ Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներուն եւ խմբապետ Նայիրի Յակոբեան-Գալընեան ստացաւ բաժակը, որ նուիրուած էր տէր եւտիկին Ռիչըրտ Բարմաքեանի կողմէ:

Վարձքը կատար խումբին մարզիչ քաբէն Ալաա Զահրանին, օգնական մարզիչ քաբէն Մակէս Ահմատ Սալամայի, պատասխանատու Սօսի Յակոբեանի եւ օգնական Արեգ Աբգարեանի:

Օրուան վերջին մրցումը իսկապէս անակնկալ մը եղաւ բոլոր ներկաներուն եւ մարզիկներուն համար, որոնք ջիղերու պրկումով, կլանուած կը հետեւէին այս խիստ արտասովոր մրցումին՝ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի երեք տղոց խումբերուն միջեւ: Հ.Մ.Ը.Մ. Արարատի անտեղի ինքնավստահութիւնը եկաւ փշրուելու Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ յաղթելու վճռականութեան պատնէշին վրայ: Հակառակ որ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը միշտ մի քանի թիւի առաւելութիւն կարողացած էին արձանագրել, Արարատը վստահ էր, որ վերջաւորութեան պիտի կարողանար անպայման յաղթական դուրս գալ: Սակայն այս փափաքը ի դերեւ ելաւ, հակառակ իրաւարարներուն անիրաւութիւններուն Աղեքսանդրիոյ խումբին նկատմամբ: Արա-



րատի համակիրներէն զատ, բոլոր ներկաները անխտիր, Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղոց կը քաջալերէին եւ երբ մրցումը աւարտեցաւ 46-44 արդիւնքով ի նպաստ Աղեքսանդրիոյ խումբին, բաժակին տիրացած ըլլալու աստիճան անհուն էր բոլորին ուրախութիւնը:

Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի միջեւ մրցումէն ետք, ֆութպոլի մրցում մը կազմակերպուած էր ակումբին ֆութպոլի երէց խումբին եւ Մար Կերկէս խումբերուն միջեւ, սակայն պասքէթպոլի խաղը այնքան երկարեցաւ եւ ժողովուրդը այնքան մագնիսացած էր պասքէթպոլի դաշտին շուրջ, որ քիչեր միայն նկատեցին կողքի դաշտին վրայ սկսած ֆութպոլի խաղը: Մրցումը խաղացուեցաւ առանց հանդիսատեսի ու ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը յաղթական հանդիսացան 7-6 արդիւնքով: Վարձքը կատար մարզիչ քաբթէն Մակտիի, նաեւ պատասխանատու Ռուբէն Սիմոնեանի:

Կիրակի 6 Հոկտեմբերին առաջին մրցումը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 12 տարեկանէն վար տղոց եւ Շապապ Էլ Կէզիրա խումբերուն միջեւ էր: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ կորիւնները շատ լաւ, արագ ու ինքնավստահ խաղարկութեամբ շփութեան մատնեցին իրենցմէ աւելի հասա-

կաւոր մրցակիցները, դիւրաւ յաղթական հանդիսացան, 49-22 արդիւնքով եւ ստացան բաժակը, որ նուիրուած էր տէր եւտիկին Ժորժ Զերտելեանի կողմէ: Վարձքը կատար խումբին մարզիչ քաբթէն Ամր Դայսիի եւ պատասխանատու Մարլօ Սիմոնեանի, որուն այդ օր կը փոխարինէր Տիանա Աւագեանը:

Օրուան երկրորդ մրցումը ակումբին 16 տարեկանէն վար եւ Հելիոլիտոյի աղջիկներուն միջեւ էր: Հակառակ որ խաղը սկսաւ խառնաշփոթ կերպով երկու խումբերուն համար ալ, սակայն ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկները շուտով ինքնավստահութիւն ձեռք ձգելով բարելաւեցին իրենց խաղը, արդիւնքի տարբերութիւնը բացին եւ յաղթական հանդիսացան 39-22 արդիւնքով: Անոնք ստացան բաժակը, որ նուիրուած էր տէր եւ տիկին Էմմանուէլ Սիկալասի կողմէ: Վարձքը կատար խումբին մարզիչ քաբթէն Մակէտ Ահմատ Սալամայի եւ պատասխանատու Սեան Տրդատեանի:

Նախքան աւարտական մրցումին սկսիլը, մարզարանին աշխոյժ ատենապետ Ժիրայր Տեփոյեան խօսք առաւ եւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր ակումբներուն, որոնք իրենց մասնակցութիւնը բերած էին մրցաշարքին եւ բոլոր անոնց, որոնք նուիրած էին բաժակները, նաեւ տէր եւ տիկին Վարդ Ալեքսանեանին, որոնք նուիրած էին մէտայլները: Ապա մէկ վայրկեան յոտնկայս յարգուեցաւ յիշատակը բոլոր անոնց, որոնք անվերադարձ հեռացած էին կեանքէն:

Աւարտական խաղը երկու ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻներուն երէց տղոց միջեւ էր, որ մրցում ըլլալէ աւելի հաճելի փորձ մըն էր երկու խումբերուն համար. հանդարտ ջիղերով ու մաքուր խաղարկութեամբ բոլոր մարզիկները դաշտ իջան: Մրցումը



աւարտեցաւ 72-42 արդիւնքով, ի նպաստ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն ու խմբապետ Հրազդան Գալընեան ստացաւ բաժակը, զոր նուիրած էին տոքթ. եւտիկին Վիգէն Ծիգմէնեան՝ ատենապետ Գահիրէի ՀՄԸՄին:

Վարձքը կատար խումբին մարզիչ քաբթէն Ամր Աշուրի, օգնական քաբթէն Ալաա Զահրանի, նաեւ խումբին պատասխանատուներ Մայք Նապիլի եւ Հրազդան Գալընեանի:

Մասնաւոր շնորհակալութեան արժանի է Սեւան Տրդատեանը, որ մրցաշարքին երեք

օրերուն ընթացքին բարձրախօսը ձեռքին ըրաւ պէտք եղած յայտարարութիւնները եւ ներկայացուց մարզիկները շատ հաճելի կերպով:

Վարձքը կատար Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչութեան, որ ճիգ չի խնայեր տղոց եւ աղջիկներու պասքէթ-պոլի հինգ մնայուն խումբերն ու Ֆութպոլի տղոց երկու խումբերը պահելու համար:

Սօսի Ներքսեան-Յակոբեան

Հ.Մ.Ը.Մ. ԱՐԱՐԱՏԻ 2019-Ի ՄՐՑԱՇԱՐՔԸ

Ուրբաթ, 18 Հոկտեմբեր 2019-ին սկսաւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի տարեկան եգիպտահայ պասքէթ-պոլի մրցաշարքը, հովանաւորութեամբ Գերշ. Տ. Աշոտ Ս. Եպս. Մնացականեանի, Բարեխնամ Առաջնորդ Եգիպտոսի Հայոց Թեմին եւ նախագահութեամբ տոքթ. եւ տիկին Արմէն Մազլումեանի:

Օրուան առաջին մրցումը Հ.Մ.Ը.Մ. Արարատի եւ Թայարանի 14-էն վար տղոց խումբերուն միջեւ էր. Արարատի տղաքը յաղթական հանդիսացան ու ստացան Մարք Ուասէֆի նուիրած բաժակը:

Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻներու երեք տղոց խումբերուն միջեւ մրցումը յաջորդն էր: Խաղը հետաքրքրական էր, քանի որ արդիւնքի տարբերութիւնը միշտ փոքր էր, սակայն ի վերջոյ Գահիրէի խումբը յաղթեց 63-54 արդիւնքով:

Օրուան յայտագրին վրայ տակաւին երկու մրցումներ կային: Հ.Մ.Ը.Մ. Արարատի եւ Հ.Մ.Ը.Մ. Կամքի երեք աղջիկներուն միջեւ մրցումը սկսաւ սաստիկ տկար ուր առաջին քառորդախաղի աւարտին արդիւնքը 4-0 էր, ի նպաստ Արարատի խումբին: Հետզհետէ քիչ մը բարելաւուեցաւ արդիւնքը ու մրցումը աւարտեցաւ 33-22, ի նպաստ հիւրընկալ ակումբին:

Վերջին խաղը Հ.Մ.Ը.Մ. Արարատի եւ Հ.Մ.Ը.Մ. Կամքի երեք տղոց խումբերուն միջեւ էր: Խաղը բաւական հետաքրքրական էր եւ արագ ու Արարատի խումբը յաղթական հանդիսացաւ 71-44 արդիւնքով:



քով:

Շաբաթ 19 Հոկտեմբերի յայտագիրը սկսաւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի եւ Թայարանի 16-էն վար աղջիկներու խումբերուն միջեւ մրցումով մը. Արարատի աղջիկները յաղթեցին եւ ստացան Նանօր Զօհրապեանի կողմէ նուիրուած բաժակը:

Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻներուն երեք աղջիկներուն միջեւ մրցումը յաջորդն էր, որ աւարտեցաւ 57-22 արդիւնքով, ի նպաստ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն:

Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Սրբուհի Թերեզայի երեք տղոց խումբերուն միջեւ մրցումը հետաքրքրական էր ու տաք, քանի որ արդիւնքի տարբերութիւնը շատ փոքր էր: Մրցումը աւարտեցաւ շատ խոնարհ արդիւնքով՝ 53-43, ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն:

Կիրակի 20 Հոկտեմբերի աւարտական մրցումները ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի երեք աղջիկներու եւ տղոց խումբերուն միջեւ էին: Նախքան մրցումներուն սկսիլը, foul shot-ի եւ ազատ ար-



ծականի բարեկամական մրցում մը կազմակերպուած էր ներկաներուն միջեւ եւ յաղթական հանդիսացած «մարզիկները» մէտայլներ ստացան:

Աղջիկներու մրցումը սկսաւ արագ ու տաք. ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկները մինչեւ երկրորդ քառորդախաղի աւարտը անհասանելի տարբերութիւն արձանագրեցին, յաղթանակի որեւէ յոյս չլատելով:

Արարատի աղջիկներուն համար: Անոնք իրենց կազմակերպուած ու գեղեցիկ խաղարկութեամբ իսկապէս արժանի եղան յաղթանակին: Մրցումը աւարտեցաւ 68-49 արդիւնքով, ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն ու խմբապետուհի Նայիրի Յակոբեան-Գալընեան ստացաւ բաժակը, որ նո-



գիւ 2 շաբաթ առաջ, պարտութիւն կրած էին Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԷՆ, սքանչելի կերպով մարզուած եւ ինքնավստահ դաշտ իջան, մինչ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը հիմնուելով իրենց տարիներու փառքին վրայ, քիչ մը անհոգութեամբ մօտեցան խաղին:



ւրած էին տէր եւտիկին Կարէն Եանըքեան:

Տարիներէ ի վեր ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի երեց տղոց խումբերուն միջեւ մրցումները կորսնցուցած էին իրենց փայլքն ու ստեղծած խանդավառութիւնը եւ դարձած միակողմանի խաղեր, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն գերազանցութեան պատճառաւ: Սակայն, Կիրակի գիշեր հանդիսատեսները ապրեցան սրտխաղի ժամեր, երբ խաղին ճակատագիրը դժուար էր գուշակել: Արարատի տղաքը, որոնք ստացան տէր եւ տիկին Նորայր Մխտիկեանի նուիրած բաժակը:

Շատ արագ ու ճշգրիտ խաղարկութեամբ Արարատը աւարտեց առաջին քառորդախաղը 22-11 արդիւնքով, ի նպաստ իրեն ու շփոթութեան մատնեց ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղոց: Երկրորդ քառորդախաղին ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը բարելաւեցին իրենց խաղը, արդիւնքի տարբերութիւնը նուազեցուցին ու հաւասարեցան 31-31 արդիւնքով: Երրորդ քառորդախաղը ջիղերու պատե-

րազմ էր հանդիսատեսներուն համար եւ մարմնական պայքար՝ երկու խումբերուն մարզիկներուն միջեւ, որուն աւարտին ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 2 թիւի առաւելութիւն արձանագրած էր: Կէս գիշերը անց աւարտեցաւ այս տաժանելի, սակայն հետաքրքրական մրցումը 73-68-ով, ի նպաստ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղոց, որոնք ստացան տէր եւ տիկին Նորայր Մխտիկեանի նուիրած բաժակը:

Սօսի Ներերեան-Յակոբեան

ԱՆԴԱՄԱԿԱՆ



ՆՈՐ ԱՆԴԱՄՆԵՐ

Ուրախութեամբ կը յայտարարենք, որ ՀԲԸՄիութեան Գահիրէի շարքերը կը խտանան նոր եւ երիտասարդ անդամներով, որոնց անունները կը ներկայացնենք մեր ընթերցողներուն.

Քրիսթինա Լաուանտի, Թալիա Րաֆֆի Միքայէլեան եւ Ալեք Րաֆֆի Միքայէլեան:

Կը շնորհաւորենք նոր անդամները եւ բեղուն գործունէութիւն կը մաղթենք իրենց այս ազգանուէր աշխատանքին մէջ:



ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ցաւով կը տեղեկացնենք, թէ Միութեանս երէց անդամներէն Ալպէռ Քրէտեան իր մահկանացուն կնքած է 13 Մարտ 2019 թուականին:

«Տեղեկատու»ն իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ անոր դուստրերուն եւ բոլոր բարեկամներուն:

